## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու
մարզի Շահումյան համայնք, ՀՀ Լոռու մարզ, գ.
Շահումյան 1փ. 66, Հեռ. (0322) 38462, 37897 ,
shahumyan.lori@mta.gov.am

N Ե-326/19
*14 հոկտեմբեր 2019թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**
**Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Կից ներկայացնում եմ Շահումյան համայնքի ավագանու թիվ 33-Ա, 34-Ա, 35-Ն, 36-Ա, 37-Ա որոշումները:

Առդիր 5 թերթ:

Invalid signature

X

**Համայնքի ղեկավար՝** **Էդիկ Մանուկյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 33-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 Թ-Ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել Շահումյան համայնքի ավագանու 2019թ-ի հոկտեմբերի 11-ի նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

2019թ-ի հոկտեմբերի 11-ի թիվ 07 նիստի

1. Շահումյան համայնքի բյուջեի կատարման 2019թ-ի III եռամսյակի կատարած ֆինանսական հաշվետվության մասին:
2. ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի 2019թ-ի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
3. Շահումյան համայնքի սեփականություն համարվող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը օտարելու մասին:
4. Շահումյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 34-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2019Թ-Ի III ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ,,Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ու Մ Է

Ընդունել ի գիտություն Շահումյան համայնքի 2019թ-ի բյուջեի 9 ամսվա կատարման վերաբերյալ հաղորդումը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 35-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, ,,Բյուջետային համակարգի մասին ,,Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ Շահումյան համայնքի ավագանին.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**

Շահումյան համայնքի 2019թ-ի բյուջեում 11.10.2019թ-ին կատարել փոփոխություններ՝ համաձայն 1-5 հավելվածների:

1. Եկամուտների գծով

**Ընդամենը** - 71 696 700 /յոթանասունմեկ միլիոն վեց հարյուր իննսունվեց հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ

այդ թվում՝

· վարչական բյուջեի մասով - 71 696 700 /յոթանասունմեկ միլիոն վեց հարյուր իննսունվեց հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ

. ֆոնդային բյուջեի մասով - 0 / զրո / ՀՀ դրամ

2. Ծախսերի գծով

**Ընդամենը** - 85 614 600 /ութսունհինգ միլիոն վեց հարյուր տասնչորս հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ

այդ թվում՝

· վարչական բյուջեի մասով - 71 696 700 /յոթանասունմեկ միլիոն վեց հարյուր իննսունվեց հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ

. ֆոնդային բյուջեի մասով - 13 917 900 /տասներեք միլիոն ինը հարյուր տասնյոթ հազար ինը հարյուր/ դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 36-Ա

### ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Հողային օրենսգրքի,, 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1.Տալ համաձայնություն Շահումյան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող Շահումյան 2-րդ փող. 1-ին փկղ. 6 հողամաս հասցեում 06-084-0026-0026 ծածկագրով 0.04566 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը, մեկնարկային գինը 630000 ՀՀ դրամ, աճուրդ վաճառքով օտարելուն:

2.Աճուրդի մասնակցության վճարը 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդով վաճառվող հողամասի հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
# ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 37-Ա

## ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, 66-րդ հոդվածի 2-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով Շահումյան համայնքի և Վահրամ Աղվանի Կուրբանովի միջև 25.12.2018 թվականին կնքված հողամասի վարձակալության պայմանագիրը՝ գրանցմամատյան 4950, դրա հիման վրա 08.01.2019 թվականին տրված հողամասի վարձակալության իրավունքի թիվ 08012019-06-0039 վկայականը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Է

1. Տալ համաձայնություն Շահումյան համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, վարձակալության իրավունքով Վահրամ Աղվանի Կուրբանովին տրամադրված 06-084-0315-0060 ծածկագրով 3.63962 հա գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի խոտհարքը օտարելուն:

2. Հաշվի առնելով, որ հողամասը վարձակալության իրավունքով պատկանում է Վահրամ Աղվանի Կուրբանովին և վարձակալը ունի գնման նախապատվություն 06-084-0315-0060 ծածկագրով 3.63962 հա գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի խոտհարքը 2547734 ՀՀ դրամով ուղղակի վաճառքով օտարել Վահրամ Աղվանի Կուրբանովին:

3.Համայնքի ղեկավար Էդիկ Մանուկյանին՝ օրենքով սահմանված կարգով Վահրամ Աղվանի Կուրբանովի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր և համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ -4  Դեմ -0  Ձեռնպահ -0

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ